

նպատակաւոր լինին ընդհանուր օգտին: (Շնորհա-
կողութիւն յատկապէս Տիկին Զարուհի Գիւլում-
կանցին, որ շնայելով իւր կանացի ուժոյն տկա-
րութեան՝ յանձն է առել ըստ կարելոյն օգնել
աղջկանց յառաջադիմութեան այդ զարոյցին մէջ
առանց մի վարձ ընդունելու): — Սահականոյշ նոր
բացուած օրիորդաց ծխական դպրոցին յառաջա-
դիմութիւն և բարեպէս յաջողութիւն մաղթելով
ի բոլոր սրտէ, խնդրեմ ի բարեջան Խմբագրութե-
նէդ Արարասոյ մի անկիւնի մէջ տեղի շնորհել
այս յօդուածիս յուրախութիւն և յօգեորու-
թիւն բարեմիտ ազգայնոց:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՇԵԳՅԱՆԵՑ:

ի 20 Մայիսի 1875 — Ի

ԱՆԷՄԱՆԻՐԱՐՈՅ:

**ԳՐԻԳՈՐ ՏԷՐ — ԿԻՐԱԿՈՍԵԱՆԵՒ ՆՈՒԷՐ
ԵՒ ԽՈՍՏՈՒՄՆ:**

ԽՈՒՇԱԿՅՐԱՆԻՆԻ ԱՆՆԱՆ ԱՐԱՐԱՍ ԼՃԱԿՅՐՈՅ:

Թող ներուի ինձ ամազրոյդ Արդոյ ընթերցող
Հասարակութեան աղնիւ ուշադրութիւնը զբա-
ղեցնել մի ուրախատիժ և ուշադրութեան արժա-
նի համառօտ տեղեկութեամբ, և անտարակոյս եմ
որ աղքատք խմբագրութիւնդ կը հաճի զետեղել
այս Աստուածահաճոյ գործը իւր պատուական ամ-
սաղրոյ էջերի մի անկիւնում՝ յուրախութիւն ա-
մեն եկեղեցաւոր և հայրենասէր սրտերի:

Տեղոյս հասարակութիւնը տեսնելով այժմեան
եկեղեցւոյ փորութիւնը և նորա գաւթում զբա-
նուած ուսումնարանի անյարմարութիւնը՝ մտադր-
վեցաւ կառուցանել և մի այլ եկեղեցի՝ առաջինի
հետ որի պարիսպը լինի ընդարձակ և ունենայ
յարմարութիւն ուսումնարանի: Հասարակութեան
այս բարի մտադրութիւնը ի զուլս բերել ցանկա-
լով՝ մեր քաղաքացի մեծապատիւ մահտեի Գրի-
գոր աղայն՝ Տէր Կիրակոսեան՝ բարեպաշտական
հօրով յանձն առաւ այդ բարենպատակ շե-
նութեան բոլոր ծախսը անել, իւր սեփականու-
թենից կառուցանել մի քարուկրեայ հոյակապ-
փառաւոր եկեղեցի, որի համար այժմէն իսկ առ-

ձեռն պատրաստ դրամ՝ 6000 բուրջի յանձնում է
իւրեանից նշանակած երեք բարիոյս անձանց որ-
պէս զի երբ քաղաքական իշխանութենից տելը
տրուի, նորա սկսին շինութիւնը, յանջնջելի յի-
շատակ իւր ի Տէր հանգուցեալ ծնողի — Տէր
Կիրակոս քահանայի և իւր աստուածաւոր և բա-
րեւէր հոգւոյ, և թիրեւս յուսալի է նորա մեծա-
գործ հոգուց զկնի շինութեան եկեղեցւոյն նպաս-
տել և ուսումնարանի շինութեան, իսկ այժմեան
ազգայց ուսումնարանը թողուլ օրիորդաց համար,
որին մեր հասարակութիւնը ունի զգալի կարօտու-
թիւն, վասն զի այժմ օրիորդք վարձած աան մէջ
են ուսանում: Տէր — Կիրակոսեանի այս գովելի
բարեպաշտական գործը անմահացնում է իւր բա-
րեգործ գեղեցիկ անունը մեր ազգի բարեբարաց
շարքում՝ յօրինակ բարեաց հանդիսանալով Ազգիս
մեծապատիւ հարստաց համար:

ՍՏԵՓԱՆՆՈՅ ԱՆՍԵՐԱՆԷԱՆԵՑ ԳԷՄԻՆՅՈՂԵԱՆԵՑ:

ի 25 Նոյեմբերի 1875 — Ի

ԱՆԷՄԱՆԻՐԱՐՈՅ:

ԲԱՆ ՀԱԿԻՐՃ ԱՌ ԱՐԱՐԱՍ ԱՄՍԵՎԵՐՆ:

Այլ եւ այլ կիրք շարժեցան հոգւոյս մէջ երբ ըն-
թերցայ Արարաս չքնաղ ամատետրակի առաջին
համարի 1875 ամի, յէջն 11, մեր ազգի համար նա-
խատաղիր այս խօսքերն թէ « Հայք զոգջիր խաբը-
րայր են առհասարակ » եւ նորա դէմ ՅՅ Յուանշա-
նաւ բերած րացատրումիւն, որ կսկանի այսպէս
« Թէ ուստի արդեօք առեալ յարգոյ հեղինակն՝ խա-
րեքայս անուանէ զհայս » որ մինչեւ ի վերջն արժանի
է ոսկիզօծ տառիք դրօշմէլ ի տախտակս մտաց, եւ
իւրարանչիւր հայ պարտաւոր է զայն անգիր սերտել,
եւ յամենայն ժամ կրինել եւ յիշել, որովնտեւ ստէպ
կկաննն հանդէպ մերոց համազգեաց այսոյիսի անա-
լի հուարարանութեանց՝ Թէ « այս ինչ որ ջանայր
խաբել զիս, իսկ այս ինչ որն հոց էր », եւ մակարե-
րկ զայնայիտի նողկալի եղբակացումիւն, Թէ « սպա-
տրեմն Հայք խաբերայ են » եւլի:

Եւս էր Թէ միոյն խաբերայ անուանին, եւ ոչ
բան զայն եւս վատեար կոչունուս մեր ճակատի վե-